ցությունը սերտ մերձեցում էր առաջացնում հայ կալվածատիրության և միջնորդ կապիտալի միջև, խտացնում էր առևտրական կապիտալի ներկայացուցիչների շարքերը և ուժեղացնում կապիտալի դերը գավառում։

Սակայն հայ ազնվական հողատերերի մեծագույն մասը շտապեց իր զավակներին տեղավորել գլխավորապես գյուղատնտեսական աշխարհից դուրս պարապմունքների մեջ։ Կալվածատերերը առաջիններն էին, որ իրենց երեխաներին ուղարկեցին դպրոցները ուսում ձեռք բերելու համար։ Շրջանավարտների մի փոքր հատվածը մտավ զինվորական ծառայության։ Այդպիսիները դուրս եկան առավելապես Մելիք-Հայկազյանների և ավելի սահմանափակ չափերով Մելիք-Փարսադանյանների մելիքական հին տներից[42]։ Իսկ ամենամեծ հոսանքը ուղղվում էր դեպի ազատ պարապմունքների ասպարեզը և սարքվում էր որպես իրավաբաններ, ինժեներներ, բժիշկներ, մասամբ պաշտոնեության մեջ[43], մասամբ անկախ և ազատ ասպարեզներում՝ լրացնելով նորակազմ հայ մտավորականության շարքերը։ Ազնվական հողատիրության այդ անդամները սակայն գրեթե ամբողջովին իրենց ուժերի գործադրությունը գտնում էին ոչ թե Զանգեզուրում, այլ Անդրկովկասի այլ վայրերում, գլխավորապես քաղաքներում, այն է՝ Բաքվում, Տփղիսում, մասամբ Շուշում և Գանձակում։ Հեղափոխությունը Զանգեզուրում չգտավ ոչ դասակարգային գիտակցությամբ, ոչ էլ առանձին հատուկ տնտեսական շահերով միավորված հայ կալվածատիրություն, որը և ընդունակ չեղավ որպես առանձին հասարակական խմբավորում ակտիվ մասնակցություն ունենալ հաջորդ իրադարձությունների ընթացքի մեջ։ Տեղերում ապրել մնացող կալվածատեր-ազնվականները հարեցին առևտրական կապիտալիստական շերտին։ Ավելի կազմակերպված և իր ազգային զանգվածի հետ ավելի շաղկապված հանդիսացավ թուրք կալվածատիրությունը։ Զինվորական և քաղաքացիական պաշտոնեության, ինչպես և ազատ պարապմունքների մեջ իրենց զավակներին զետեղելու հնարավորությունները ցարական պետական կարգերում առանձնապես դյուրացված էին ազնվական ծագում ունեցողների, շատ ավելի, քան հասարակության այլ խավերի համար։ Պետական դպրոցների դռները լայն բացված էին նախ և առաջ ազնվական երիտասարդների, տղաների և աղջիկների առջև, որոնք առաջին հերթին էին ընդունվում այնտեղ։ Ճորտատիրության վրա հիմնված ռուսական իրականության մեջ այլ կերպ չէր էլ կարող լինել։ 1860 թ. հունիսի 9-ի օրենքով[44] դյուրացված էր ոչ միայն զինվորական՝ ենթասպայից սպա դառնալու, այլև քաղաքացիական պաշտոնեության մեջ մելիքների, բեգերի, աղաների զավակների համար բարձր աստիճանների ստացումը։ Այդ դյուրությունները կախված էին նրանց ազնվական ծագման անվիճելի լինելու կատեգորիայից։

Երկրորդ կատեգորիայի դյուրությունները տրվում էին նաև հոգևորականների զավակներին։ Այս իրավակարգերում նորակազմ ինտելիգենցիան

---

[42] Զինվորական ծառայության մտնելու տրամադրությունը ավելի դրսևորված էր Լեռնային Ղարաբաղի մելիքական տների մեջ՝ Մելիք-Շահնազարյանների, Դոլուխանյանների, Բեգլարյանների մեջ։

[43] Օրինակ՝ Մելիք-Հուսեյինյաններից տեղում մնացած Մանուչար-բեգը պետական պաշտոնյա էր Ե. Լալայեանի հետազոտության թվականներին։

[44] «II-ое полное Собрание Законов», т. XXXV, № 35, 903. ,